ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի հուլիսի 15-ի թիվ 338-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 18-ի N 514-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 25-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում «պարարտանյութերի ձեռքբերման աջակցության» ծրագրի շրջանակներում մոնիթորինգի իրականացման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝

2.1 2026 թվականի ընթաքում ծրագրի շրջանակներում պարարտանյութի մատակարարումից հետո երկամսյա ժամկետում իրականացնել համայնքներում շահառուների առնվազն 20 տոկոսի փաստաթղթերի ընտրանքային մոնիթորինգ՝ ծրագրի պահանջներին համապատասխանության մասով:

2.2 Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում 2 աշխատանքային օրվա ընթացքում պարարտանյութի սուբսիդավորված կամ փոխհատուցված գումարները՝ պետական բյուջե վերադարձնելու մասին, գրավոր տեղեկացնել համայնքի ղեկավարին և էկոնոմիկայի նախարարությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող

Recoverable Signature

Signed by: HOVHANNISYAN MILADA 6914980608

X

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026թ հուլիս 15 ք. Աշտարակ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2026թ.
հուլիսի 17 N 338-Ա
որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Կ.Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության խորհրդական

Ա. Շուխյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Գ. Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Թ. Թովմասյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝

Recoverable Signature

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN HRACHYA 2014650144 **Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**